ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՄ ԾՐԱԳՐԻ ԹԻՄԻ ՂԵԿԱՎԱՐ

GOETHE INSTITUT

Sprache. Kultur. Deutschland.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայի Դաշնային Հանրապետության մշակութային ինստիտուտը՝ Հայաստանում Գյոթե ինստիտուտը, Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրի համար փնտրում է մոտիվացված թիմի ղեկավար։ Աշխատանքը նախատեսվում է Գյոթե ինստիտուտում 2026 թվականի սեպտեմբերից մինչև 2029 թվականի ապրիլ։

ՊԱՇՏՈՆԸ
ԵՄ ֆինանսավորած ծրագրի թիմի ղեկավար

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՍՏԻՔԸ
Կես դրույք (շաբաթական 20 ժամ)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ
Երևան, Հայաստան

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ
2026 թ. սեպտեմբեր – 2029 թ. ապրիլ

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ
Ծրագիրը նպատակ ունի ամրապնդել ԵՄ-Հայաստան համագործակցությունը մշակույթի, երիտասարդության ներգրավվածության և շարունակական զարգացման նախաձեռնությունների միջոցով՝ միաժամանակ բարձրացնելով Եվրամիության գործունեության տեսանելիությունն ու հանրային ընկալումը Հայաստանում։ Այն իրականացվում է ԵՄ պատվիրակության, EUNIC անդամների, ազգային շահառուների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների սերտ համագործակցությամբ։ Ծրագիրը համադրում է մշակութային էկոհամակարգի զարգացումը, երիտասարդության մասնակցությունը և շարունակական զարգացման վրա կենտրոնացած հանրային ներգրավվածությունը։

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
Թիմի ղեկավարը պատասխանատու է ծրագրի ընդհանուր ռազմավարական և օպերատիվ կառավարման համար։ Պաշտոնը ապահովում է ծրագրի բոլոր բաղադրիչների ներդաշնակ փոխհամաձայնեցումը, վերահսկում է ծրագրի իրականացման ընթացքը, պահպանում շահառուների հետ հարաբերությունները և ղեկավարում հաշվետվությունների ու որակի ապահովման գործընթացները

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռազմավարական կառավարում

- Ծրագրի ընդհանուր ղեկավարում և համակարգում
- Մշակութային, երիտասարդական և շարունակական զարգացման ուղղությունների փոխհամաձայնեցման ապահովում

- Հանդես գալ որպես ԵՄ պատվիրակության և առանցքային գործընկերների հետ համագործակցության հիմնական կապող օղակ
- Ռիսկերի հայտնաբերում և նվազեցում

Թիմի ղեկավարում

- Աշխատակազմի և խորհրդատուների գործունեության վերահսկում
- Աշխատանքային փաթեթների համակարգում
- Ծրագրի պլանավորում և ընթացիկ հանդիպումների կազմակերպում

Ծրագրի ընթացքի մշտադիտարկում

- Ծրագրի նպատակների և արդյունքների գնահատում
- Գործունեության և արդյունքների որակի վերահսկում
- Ծրագրի իրականացման աջակցություն կարևոր փուլերում

Հաշվետվություն

- Տեխնիկական և բովանդակային հաշվետվությունների ընթացքի վերահսկում
- Ապահովել պայմանագրային պարտավորությունների պահպանումը
- Ծրագրի արդյունքների ներկայացում շահառուներին

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Պարտադիր է

- Մշակութային կառավարման, հանրային վարչարարության, միջազգային հարաբերությունների, հասարակական գիտությունների կամ հարակից ոլորտներում մագիստրոսի աստիճան
- Առնվազն 7 տարվա մասնագիտական փորձ
- Դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի կառավարման առնվազն 3 տարվա փորձ
- Միջդիսցիպլինար թիմերի ղեկավարման ապացուցված փորձ
- Նախագծեր կառավարելու, համակարգելու և հաշվետվություններ կազմելու գերազանց հմտություններ
- Անգլերենի գրավոր և բանավոր գերազանց իմացություն

Ցանկալի է

- ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող նախագծերի և ընթացակարգերի հետ աշխատանքային փորձ
- Մշակույթին, երիտասարդությանը, շարունակական զարգացմանը կամ քաղաքացիական հասարակությանը վերաբերող ծրագրերում աշխատանքային փորձ
- Ռազմավարական հաղորդակցության և հանրային դիվանագիտության ոլորտում փորձ

- Լայն մասնագիտական կապեր Հայաստանում

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Առաջնորդելու հմտություններ և ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն
- Ռազմավարական մտածողություն
- Շահագրգիռ կողմերի կառավարման հմտություններ
- Հաղորդակցման գերազանց հմտություններ
- Բազմամշակութային միջավայրում աշխատելու կարողություն

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- Ինքնակենսագրություն (առավելագույնը 4 էջ)
- Մոտիվացիոն նամակ (առավելագույնը 2 էջ), որտեղ ներկայացվում է թեկնածուի մոտիվացիան տվյալ պաշտոնի համար և ցույց է տրվում, թե ինչպես են նրա որակավորումները և փորձը համապատասխանում պաշտոնի պահանջներին
- Երկու մասնագիտական հղումների (ռեֆերենսների) կոնտակտային տվյալներ

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է 2026թ. օգոստոսի 23-ը: Խնդրում ենք դիմումներն ուղարկել անգլերեն լեզվով միաժամանակ **hasmik.muradyan@goethe.de** և **jan-tage.kuehling@goethe.de** հասցեներին:

Խնդրում ենք որպես նամակի թեմա նշել
"Application – Team Lead"

Տեղում անցկացվող հարցազրույցները նախատեսված են օգոստոսի 27-ին և 28-ին:

Խնդրում ենք նկատի ունենալ
Հայտարարված հաստիքը կախված է արտաքին ֆինանսավորման բարեհաջող հաստատումից: Պայմանագիր կնքվելու է միայն հաստատված ֆինանսավորման դեպքում: